

ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԻ ՎԱՂ ՇՐՋԱՆԻ

ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ-

(ԺԹ դ. Ա քառորդ)

Իրենց մշակութային քարոզչութիւնը Մխիթարեանները մի յայտնի չափով իրականացրեցին պարբերական հրատարակութիւններով: 1799 թ. մինչեւ 1820 թռականը մէկը միւսի հետեւից կամ միաժամանակ վենետիկում նրանք հրատարակեցին նախ պարբերական տարեգրքեր, «Տարեգրութիւնը» (1799-1808), «Եղանակ Բիւզանդեանը» (1803-1820), այնուհետեւ «Դիտակ Բիւզանդեան» շաբաթաթերթը (1812-1816): Տարեգրքերից շաբաթաթերթի անցնելը վկայում է դէպի աւելի լայն լսարան դիմելու՝ Մխիթարեանների ընթացքը եւ այս հանգամանքը իր ազդեցութիւնը պէտք է թողնէր մամուլի բովանդակութեան եւ ձեւի նրանց ինքնատիպ ըմբռնումների վրայ, որոնք իրենց զարգացումն էին ապրելու ԺԹ դ. առաջին քառորդից յետոյ էլ, 1843 թ. լոյս տեսած «Բազմավէպ» ամսագրում:

«Տարեգրութիւնը» հեղինակել եւ խմբագրել է Մխիթարեան նշանաւոր գործիչ, պատմաբան եւ աշխարհագրագէտ Ղ. Ինճիճեանը՝ 8 հատորնոց «Դարապատումի» հեղինակը: Սկզբից եւեթ նա մտադրուել էր արեւմտահայ գրագէտ ընթերցողին տեղեակ պահել աշխարհում կատարուող քաղաքական իրադարձութիւններին եւ յիշարժան դէպքերին, այլ կերպ ասած, Օսմանեան թուրքիայի եւ գաղութահայ միւս ընթերցողների մէջ ծաւալել լուսաւորական գործունէութիւն: 1799 թ.՝ առաջին տարեգրքի «Յառաջաբանութեան» մէջ նա նշում էր, որ իր աշխատութեան նպատակն է ընթերցողին ծանօթացնել նախորդ տարուայ «երեւելի դիպուածներին»՝ նրան տրամադրելով «պատմական յիշատակարան»: Սակայն նոյն՝ առաջին տարեգրքից էլ նկատելի է Ղ. Ինճիճեանի աւելի հեռուն գնացող միտումը՝ ընթերցողների

ղած յեղափոխութիւնների մէջ ամենաարինայի յնկատմամբ: Իր այդ հակակրանքն ինճիճեանը արտայայտում է նաեւ որոշակի նիւթերի տպաւորիչ ցուցադրմամբ այսպէս, մի տեղ սեղմ տողերով յայտնում է, որ Փարիզում կոտրել են Վոլտերի, Դիդերոյի եւ Տեյլի արձանները, վանդալիզմ, որով ընթերցողը պէտք է համադրէր յեղափոխութեան եւ մշակութային արժէքների ոչնչացման իրողութիւնները:

Որպէս պատմաբան, ինճիճեանը իր տեղեկանքներում կարեւոր տեղ է յատկացնում տարբեր երկրների առեւտրի ու վաճառականութեան զարգացման հարցերին, ապրանքափոխանակութեանը ու առեւտրական նաւատորմին, տէրութիւնների մաքսային քաղաքականութեանը եւ այլն: Վաճառականութիւնն ու առեւտուրը համարելով քաղաքակրթութեան շարժիչ ոյժերից մէկը, ինճիճեանը դրանց զարգացման անարգել ընթացքի նախապայմաններից մէկն է համարում խաղաղութիւնն ու փոխադարձ տնտեսական շփումները պետութիւնների միջեւ: Այս տեսակէտից նա չի զսպում իր հակակրանքը Եւրոպայում եւ մասնաւորապէս Իտալիայում Ֆրանսացիների մղած պատերազմների նկատմամբ: Առհասարակ, պատերազմները նա գնահատում է որպէս քաղաքակրթութեան զարգացումը կասեցնող յետադիմական երեւոյթներ, նշելով, որ «աս արուեստը (իմա վաճառականութիւնը - Ա. Խ.) ընդհանուր է, ամէն ազգ կը բանեցնէ ու կը շահի, թագաւորներն ալ աս արուեստէն կը շահին՝ տուրք ու կիւմուլք առնելով: Բայց ծեծի (այսինքն՝ պատերազմի - Ա. Խ.) ատեն էն առջի դադրող արուեստներուն մէջ աս արուեստն է»¹:

Պետութիւնների տնտեսական ու քաղաքական ուրուագծերն անելիս ինճիճեանը անհամեմատ ընդարձակ տեղ է յատկացնում Օսմանեան Թուրքիային եւ դա հասկանալի է: Իր այս հրատարակութիւնը, ինչպէս եւ քիչ անց կը տեսնենք, «Եղանակ Բիւզանդեանը» նախաձեռնելիս, նա նիւթերի գերակշիռ մասը հասցէագրում էր Կոստանդնուպոլսի, Ջմիւռնիայի, ինչպէս եւ Թուրքիայի միւս մեծ քաղաքների հայ ազգաբնակչութեանը, ուստի եւ այդ երկրի պատմութեան դրուագներին նա յատկացնում է ճանաչողական կարեւոր նշանակութիւն: Հազիւ թէ համոզիչ լինի այդ հանգամանալի նկարագրութիւնների մէջ տեսնել ինճիճեանի,

¹ «Տարեգրութիւն», 1801, էջ 66:

իրը՝ Օսմանեան Թուրքիայի եւ սուլթանների «մեծարողին» «ակնածանքի» ու «խանդաղատանքի» զգացումներ արտայայտողին, ինչ յայտնել եւ «Տարեգրքի» խմբագրի վերաբերեալ կարծիքների մէջ: Եթէ Ինճիճեանը այստեղ դատափետումներ չի անում, ապա դա ամենեւին չի նշանակում, որ նա այդ երկիրը դարձրել էր իր հիացմունքի առարկան: Այս առթիւ արժէ յիշել, որ «Տարեգրութեան» խմբագիրը ամէնից առաջ նկատի ունէր Օսմանեան Թուրքիայում ապրող եւ գործող արեւմտահայերին:

Լինելով կաթոլիկական գործիչ, Ինճիճեանը դաւանական անհանդուրժողութեան ոչ մի նշոյլ չի ցուցաբերում իր յօդուածներում: Նա ձգտում է լինել զուսպ եւ չափաւոր նկարագրողի դերում, անգամ, երբ խօսքը վերաբերում է արտաքին քաղաքական իրողութիւններին, ինչպէս Պապի եւ Նապոլէոնի փոխյարաբերութիւններին, ճիշդիւս գործիչների հանդէպ տարբեր երկրբերութիւններին, ընդհանուր գնահատականի մէջ եւ չի ձգտում դէպքում պէտք է նկատել, որ իր համոզմունքները նա յայտնում է երեւոյթների ընդհանուր գնահատականի մէջ եւ չի ձգտում դրանք փաթաթել իր ընթերցողների վրին՝ իբրեւ ամէնուրեք ներկայ եւ անառարկելի ճշմարտութիւն:

Միւլթարեանների միւս պարբերականը, դարձեալ տարեգրութիւն, խմբագրել է նոյն Ինճիճեանը: Ինչպէս տարեգրքի վերնագիրն է յուշում՝ «Եղանակ Բիւզանդեան», այն գլխաւորապէս նախատեսուած էր եղանակի գուշակման, եղանակի փոփոխութիւնները պայմանաւորող երեւոյթների բացատրութեան համար, ուղղուած լինելով, ինչպէս եւ «Տարեգրութիւն»ը, պոլսահայ ընթերցողին (Ստամբուլ-Բիւզանդիոն հոմանիշների փոխանցումով): Ինճիճեանը, իրօք, խմբագրական որոշակի սկզբունքների տէր խմբագիր էր: Եթէ «Տարեգրութեան» մէջ նա կառուցել էր նիւթը մատուցելու կայուն ձեւ, այսինքն, նախ ընդհանուր տեսութիւններ էր տալիս պետութիւնների, նրանց քաղաքականութեան, աշխարհագրութեան, բնական պայմանների եւ տնտեսութեան վերաբերեալ, յետոյ անցնում առանձին երկրների, ապա «Եղանակ Բիւզանդեանում» շարունակում է այդ ոճը՝ նախ մատուցում աստղաբաշխական, օդերեւութաբանական համառոտ

լրատուութիւն, այնուհետեւ անցնում է ամիսների հանգամանալի նկարագրութեանը: Այդպիսի ընդհանրական բնոյթ ունէին նաեւ «Գուշակութիւնք օդերեւոյթի փոփոխութեանց» խորագրով նիւթերը:

Մեր ուսումնասիրութիւնից դուրս է որոշակի եզրակացութիւններ անել այն մասին, թէ որքանով այսօր կարելի է գիտական համարել ինճիճեանի օդերեւութաբանական կուսհումները կամ եղանակի եւ միջնորոտային փոփոխութիւնների մեկնաբանութիւնները: Դա մասնագէտ-օդերեւութաբանների գործն է, սակայն կարող ենք ասել, որ դրանք պարունակում են նաեւ արժէքաւոր բնագիտական, աշխարհագրական, առողջապահական գիտելիքներ, ունեցել են գործնական նշանակութիւն Կ. Պոլսի եւ դրան կից գիւղատնտեսական շրջանների հողագործութեան համար: Տարեգրքի 2րդ՝ 1804 թ. հրատարակութեան մէջ, որն ամբողջովին յատկացուած է եղանակին, խմբագիրը յայտնում է, որ իր իշխանութեան նպատակն է «Ստամպուլի մեր ազգին բանասէրներին.... չի թողուլ ասանկով գուարձալի տեղեկութիւններէ, կը դնենք հոս աս տարի փոփոխութեանց գուշակութիւնը»²: Մէջբերենք մէկ նմոյշ 1804 թ. տարեգրքից՝ եղանակի գուշակութեամբ. «Տիրող աստղը աս տարուան՝ Երեւակն է, տարին բարեբեր պիտոր ըլլայ, ցորեն, եղ, իփեկ (մետաքս - Ա. Խ.) ու պտուղ շատ պիտոր ըլլայ, անձրեւ ու հով շատ պիտոր երթայ, ետքը աղէկ օրերով կը լմնայ»³: Ամսուայ օրերի եղանակային բնութագրեր յաճախ ուղղուում են երկրագործներին՝ անմիջականօրէն կապուելով վարուցանքի, բերքահաւաքի եւ երկրագործական այլ աշխատանքների կատարման նպատակայարմարութեան եւ այլնի հետ: Օրինակ, «22 փետրուար. ձիթենի, ծնեբեկ, ասոնց նման բաներ տնկելու ատեն»: «27 ապրիլ. զով (սերին) օրեր, մանաւանդ փոյրագով»: «16 մայիսի. ոչխարներուն բուրդը կտրելու ատեն»: Եղանակի տեսութիւնները շատ յաճախ տրւում են 17, 18, 19 եւ 37 տարիների շրջաններով:

Հրատարակուելով աւելի քան մէկուկէս տասնեակ տարի, «Եղանակ Բիւզանդեանը» անընդհատ փոփոխութիւններ է կրել եւ հարստացել բովանդակութեան տեսակէտից: Տարիների հետ

² «Եղանակ Բիւզանդեան», 1804, էջ 4:

³ Նոյն տեղում, էջ 5:

այստեղ աւելանում են նոր խորագրեր, դրանց մի մասը փոխարինւում է նորերով, միւս մասը մնում է կայուն, սակայն կարելորն այն էր, որ տարեգրքի համար արդէն նեղ էր, «Եղանակ Բիւզանդեան» անուանումը: Ուստի եւ 1809 թ. այն կոչւում է «Եղանակ Բիւզանդեան բազմավէպ»՝ հիմնաւորելով նրա թեմատիկ նոր ընդգրկումները: Տարեգրքի համար այս անուանումը հաստատուն է դառնում 1810ական թթ. սկզբներից: Յետագայում Մխիթարեանների հրատարակած «Բազմավէպ» հանդէսը կրում էր նոյն խորագիրը՝ իբրեւ իր բազմակողմանի բովանդակութեանը վերաբերող ակնարկ:

Նոյն՝ 1809 թ. «Եղանակ Բիւզանդեանում» աւելանում են «Սկզբունք բարոյականք», «Բժշկականք», «Բնականք Բիւզանդեան», «Գիւտք» եւ այլ խորագրեր: Ակներեւ է, որ տարեգիրքը ձգտում էր աւելի լայն գիտելիքներ տալ իր ընթերցողներին, ինչպէս նաեւ նպաստել հայկական դպրոցների զարգացմանը:

Ամիսների կամ ամբողջ տարուայ նկարագիրը յաճախ ինճիճեանի գրչի տակ ընդհատւում է շղատառ «Ասացուած իմաստնոց» խորագրով, որին անմիջապէս հետեւում է մի որեւէ ասացուածք, բարոյախրատական գրոյց եւայլն: Երբեմն ինճիճեանը չի բաւարարւում սոսկ գրոյցով, կամ ասացուածքով, այլ դրանց չի բաւարարւում սոսկ գրոյցով, կամ ասացուածքով, այլ դրանց չի սեփական մեկնաբանութիւնները: Ահա այդպիսի ասացուածքներից. «Սիրելի է ան հովիւը, որ ոչխարներուն բուրդը կը կտրէ, բայց կաշին չի քերթեր», կամ «Վէճդ դատաստան մ'ելլեր անզգոյշ (թեմէքելի)» եւ այլն⁴: Այս կերպ «Եղանակ Բիւզանդեան»ը տպագրել է բազմաթիւ նիւթեր, որոնք ունեն արեւելեան ու եւրոպական հին ու նոր ծագում կամ էլ իր ժամանակի ստեղծագործութիւններ են: Ազգագրագէտի համար այս բնոյթի նիւթերը, անշուշտ, հետաքրքրութիւն կարող են ներկայացնել նաեւ մեր օրերում: Կ. Պոլսի ընթերցողներին է հասցէագրուած 1805 թ. տարեգրքի բաւական ստուար հատուածը Կ. Պոլսի երկրաչարժերի, դրանց պատճառների ու հետեւանքների, յաճախականութեան, դրանցից պաշտպանուելու եւ այլ խնդիրների վերաբերեալ⁵: Նոյն ընթերցողների համար այստեղ տպագրուել են Ստամբուլի վերաբերեալ բազմաթիւ ասացուածքներ

⁴ Նոյն տեղում, 1805, էջ 4, 22:

⁵ Նոյն տեղում, էջ 25-44:

իր՝ Ինճիճեանի մեկնաբանութիւններով: Եւ առհասարակ, շատ ուշագրաւ նիւթեր կան օսմանեան մայրաքաղաքի, նրա ջրերի (Պէյօղլուի ջերմուկները), տեղական եւ ներմուտ հիւանդութիւնների մասին: Այսպէս, Կ. Պոլիսը յաճախ ցնցած ժանտախտի մասին տրուում է հետաքրքիր դիտողութիւն՝ «ժանտախտը Ստանպոլէն չըլլար, հապա Մսըրէն կու գայ»⁶:

«Եղանակ»ը յատուկ ուշագրութիւն է դարձրել նաեւ Կ. Պոլսին վերաբերող վիճակագրական տուեալներին, բնակչութեան, տների, խանութների, պաշտամունքի վայրերի քանակին եւ այլն: Ըստ դրանց, Ստամբուլի հայերը 1808 թ. ունէին 3 եկեղեցի, յոյները՝ 25: Ուշագրաւ են տեղի հայերի վերաբերող վիճակագրական տուեալները: Բոլոր հայաբնակ թաղերով հանդերձ, (Սամաթիա, Պալատ, Պէյօղլու, Իսկիւտար, Խասքէօյ, Օրթաքէօյ, Պէշիկթաշ եւ այլն), 1810ական թ. հայերը կազմել են 9.172 տուն կամ 240.000 մարդ:

Ինճիճեանի զոյգ պարբերականների մէջ հետաքրքրութիւն է ներկայացնում արեւմտահայ գրական աշխարհաբարի զարգացման գործընթացը: Նկատելի է «Եղանակ Բիւզանդեանի» լեզուական որոշակի առաջընթացը՝ համեմատած «Տարեգրութեան» հետ: Թուրքերէնով խճողուած պոլսահայ բարբառը վերջինիս էջերում շատ աւելի ակնյայտ է երեւում: Ահա մէկ նմոյշ 1801 թ. «Տարեգրութեան» լեզուից. «Երբոր Նէլսօնը աղէկ մը աւրեց թշնամույն նաւերը, խապար խրկեց ցամաքը ճէնկէ (խարիսխ գցելը - Ա. Խ.) դադրելու համար, գէրէմ ինկիլիզի առջի նիէթը մոսկովը զարնել էր, չէր ուզեր որ Տանիմառքային հետ դարձեալ ծեծկըվելով իր նաւերը սախտէ»⁷:

«Տարեգրութեան» մէջ գործածուած թուրքերէնի առատութիւնը չկայ «Եղանակ Բիւզանդեանի» մէջ: Այդպիսիք քիչ չեն նաեւ այստեղ, սակայն արդէն հայերէն բառերի կողքին, որ գործածական չեն պոլսահայ բարբառում, Ինճիճեանը փակադծի մէջ է առնում դրանց թուրքերէն համարժէքը, ինչպէս զգաստ (ալըխ), մառախուղ (փուս), ջերմ (սըթմա), խումբ (սիւրու) եւ այլն: Այս կերպ Ինճիճեանը ժողովրդականացնում էր հայերէն բառերը՝

⁶ Նոյն տեղում, 1808, էջ 54-55:

⁷ «Տարեգրութիւն», 1801, էջ 28:

ի հաշիւ դուրս մղուող օտար բառերի եւ այս իրողութիւնը խօսում է լեզուն մաքրելու՝ նրա որոշակի ուղեգծի մասին:

ԺԹ դարի առաջին քառորդին Մխիթարեանների հրատարակած երրորդ պարբերականը «Դիտակ Բիւզանդեանն» էր, որն արդէն պոլսահայ ընթերցողի աւելի բարձր պահանջներ ունեցող լրագրական ճաշակի արտայայտութիւնն էր, թէկուզ եւ լրատուութեան յաճախականութեան իմաստով: Հակառակ նախորդ երկու հրատարակութիւնների, որոնք տարեգիրք էին, «Դիտակ Բիւզանդեանն»ը երկշաբաթաթերթ էր, նաեւ՝ շաբաթաթերթ: Այն խմբագրել են միաբանութեան անդամներ Մատթաթիա Վրդ. Փիւսիկիւլեանը, այնուհետեւ՝ Գր. Գապարաճեանը եւ Մանուէլ Զախջախեանը: Պարբերականը հրատարակում էր Կ. Պոլսի «Արշարունեաց» ընկերութիւնը, որքան մեզ յայտնի է՝ առաջին պոլսահայ ընկերութիւնը ԺԹ դարում: Ընկերութեան անդամակցում էին հայ ամիրանները եւ կրթուած անձնաւորութիւններ, իսկ Մխիթարեաններն իրականացնում էին դրա հրատարակութեան գործը: Ընկերութիւնն ունէր լուսաւորական նպատակներ: «Դիտակ»ի խմբագրութիւնը յայտնում է, որ ազգին «անոյշ հայրենասիրութիւն ու բարեկարգութիւն» սովորեցնելու նպատակով «աս մեր ընկերութեան անունն ալ դրինք «Արշարունեաց ընկերութիւն»՝ յիշելով ան ջանքը հին դպրատան, որ Արշարունեաց գաւառին մէջը պայծառացաւ»⁸:

Ընկերութիւնը ծրագրել էր տպագրել հայ մատենագիրների երկերը, գիտութեան եւ արուեստների վերաբերեալ գրքեր եւ պարբերական, որպէսզի «աշխրբիս վրայ ինչ կըլլայ, ինչ չըլլար՝ իմանանք»⁹: Իրօք, պարբերականի լրիւ անուանումն էր՝ «Դիտակ Բիւզանդեան, պատմութիւն քաղաքական ու պատերազմական, բանասիրական ու եկեղեցական դիպուածներու, որ հիմըկուան ատեններս կըլլան աշխրբիս վրայ»:

«Դիտակ»ի բանասիրական բաժնում տրւում են ամենաբազմազան տեղեկութիւններ՝ Մոսկուայի շրջակայքում արուած պեղումներից մինչեւ մաթեմատիկոս Լազրանժի կենսագրութիւնը, նապոլէոնեան գրաքննութեան բնութագրից մինչեւ կենսաբան Վոքլէի գործունէութիւնը եւ այլն: «Դիտակի» խմբագրութիւնը

⁸ «Դիտակ Բիւզանդեան», 1813, 1-5, Յունուար, էջ 7-8:

⁹ Նոյն տեղում, էջ 8:

դեռեւս չունի լրագրական խորագրերի կայունութեան ընկալումը եւ նիւթերը տարբաժանում է ըստ ընդհանուր բովանդակութեան, որ յաճախ հասցնում է պատահական լուրերի եւ տեղեկութիւնների խառնիխուռն մատուցման: 1815 թ. պարբերականի էջերում աւելանում են նոր բաժիններ, որ հնարաւորութիւն է տալիս համեմատաբար որոշակիօրէն խմբաւորել նիւթերը եւ «Դիտակի» կառուցուածքը դարձնել աւելի հաւաք: Աւելանում են «Զանազան գիտելիք», «Բժշկանք», «Բնագնահականք», «Աշխարհագրականք» եւ այլ խորագրեր:

«Դիտակ Բիւզանդեանում» եւս կաթոլիկական դաւանանքի քարոզչութեան ոչ մի նշոյլ չկայ: Մխիթարեանները հաւատարիմ էին մնում իրենց՝ լուսաւորութիւնը տարածել զուտ ազգասիրական դիրքերից: Դժուար է համաձայնել այն տեսակէտի հետ, որ յայտնուել է հայ մամուլի պատմութեան մէջ, թէ այս շրջանում կաթոլիկները ժամանակաւոր միաբանութիւն էին հաստատել լուսաւորչական համայնքի կրօնական պետի հետ՝ յետագայում նպաստաւոր պայմաններ ստեղծելու կաթոլիկ միսիոներների քարոզչական գործունէութեան համար: Բայց Մխիթարեաններին չի կարելի նոյնացնել քարոզչական պաշտօններ իրականացնող որեւէ կազմակերպութեան հետ: Պէտք է նկատի ունենալ դաւանական անպտուղ վէճերից ու հալածանքներից անհրաժեշտ եզրակացութիւնների յանգած հայ մտաւորականութեան այն շերտերին, որոնք ազդեցիկ ոյժ էին դառնում դարասկզբից եւ հիմք դնում համազգային մի շարժման, որը կոչ էր անում վերջ տալ դաւանական հակամարտութիւններին եւ ազգասիրաբար միաւորուել՝ յանուն մշակութային շինարարութեան: «Արշարունեաց ընկերութեան» բազմամարդութիւնը՝ 46 մարդ, ինքնին վկայում է, որ նրան պէտք է անդամակցէին եւ լուսաւորչականներ, եւ կաթոլիկներ: Ի դէպ, այս մտայնութիւնն էր, որ մի երկու տասնամեակ անց, 1845 թ. ծնեց Կ. Պոլսի «Համազգեաց» ընկերութիւնը, 1860ին՝ «Բարեգործական» ընկերութիւնը եւ ի վերջոյ հասունեան-հակահասունեան պայքարը՝ 1850-1870ական թթ.:

Նկատելի է սակայն, նաեւ այն, որ «Դիտակը» գրեթէ լռութեամբ է անցնում ժամանակի պոլսահայ իրականութեան մշակութային իրողութիւնների կողքով եւ սա պէտք է համարել «Դիտակի» եւ «Արշարունեաց ընկերութեան» թերութիւններից մէկը: 1813 թ. «Դիտակը» տպագրել է «Իզմիր» յօդուածը, որ-

տեղ դրուատական տեղեկութիւններ են տրուում յոյների դպրոցի մասին եւ որ նրանք «զանց չեն առներ ինչ բան, որ օգտակար է առաջ երթալու գիտութեանց եւ արհեստից մէջ»¹⁰։ Ոչ մի խօսք, ոչ այստեղ եւ ոչ էլ մի այլ տեղ՝ նոյն իզմիրի հայ համայնքի կամ նրա արական եւ իգական վարժարանների մասին։ Պարբերականի ընդգծուած չէզոքութիւնն այստեղ հասնում էր ընդգծուած անտարբերութեան։

Մինչդեռ «Արշարունեաց ընկերութիւնը» եւ նրա պարբերականը չէին թաքցնում իրենց վերաբերմունքը հասարակական քաղաքական ընդհանուր իրադարձութիւնների նկատմամբ, թշնամանքը ֆրանսիական յեղափոխութեան եւ դարասկզբի պատերազմների նկատմամբ։ «Խօսակցութիւն քերթողական ընդգաղղիացի» չափածոյ մի երկում դրսեւորուած է այս վերաբերմունքը.

-Բայց ուր հապա հաւասարութիւն.

-Եղեւ եւ այն սոսկ խաբէութիւն։

-Ազատութիւն ուր եւ միւսն այն.

-Երազ եւ այն քօղ ընդունայն¹¹։

«Դիտակ Բիւզանդեանում» առաջին անգամ Մխիթարեանների պարբերականների մէջ՝ յայտնուում է չափածոյ՝ «Բանաստեղծականք» խորագրի ներքոյ։ Հետաքրքիր է, որ Մխիթարեանները, հետեւելով ժանրերի բնոյթի եւ ձեւի դասական գեղագիտութեան սկզբունքներին, չափածոյ գործերը թարգմանել են զրաբարով, կողքին, սակայն, գետեղելով դրա աշխարհաբար թարգմանութիւնը։

Կարծում եմ, այսքանը բաւական է Մխիթարեանների ԺԹ դ. առաջին տասնամեակների պարբերականների բովանդակութեանը թէկուզ ընդհանուր իմաստով ծանօթանալու համար։ Իրենց ամբողջ թերութիւններով հանդերձ, իսկ դրանց պատճառները հասկանալի են՝ Մխիթարեանները, ի վերջոյ, հնարաւորութիւն չունէին լիարժէք մասնակցութիւն ունենալ արեւմտահայ հասարակական կեանքին, նրանք իրենց խոշոր նպաստը բերեցին հայ մամուլի զարգացմանը։ Չմոռանանք, որ «Տարեգրութիւնը»

¹⁰ «Դիտակ Բիւզանդեան», 1813, N 8, էջ 33։

¹¹ Նոյն տեղում, 1815, էջ 338։

փաստօրէն երկրորդ հայ պարբերականն է «Ազդարարից» յետոյ, ուրեմն եւ հայ մամուլի պատմութեան մէջ, որտեղ եւ յարատեւել են Մխիթարեանների թողած մշակութային աւանդոյթները:

ԱԼԲԵՐՏ ԽԱԶԱՏՐԵԱՆ